

## ԻՆԳԱ ՄԱՐՏԻՆՅԱՆ

ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի մամուլի  
տեսության և պատմության ամբիոնի ասպիրանտ

### ԻՆՔԱԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ <ԱՍԱՅԱՆՅԱՅԻՆ ԼՐԱՏՎԱՍԻՉՈՅՆԵՐՈՒՄ>

Հոդվածում հեղինակը անդրադարձել է լրագրողական էքիվային: Նախնառաջ ներկայացրել է, թե ինչ է իրենից ներկայացնում էքիվան, որտեղից է գալիս, ինչու է անհրաժեշտ լրագրության ասպարեզում: Ներկայացրել է, թե Հայաստանում ինքնակարգավորման ինչ մեխանիզմներ են գործում՝ կազմակերպություններից, խմբերից մինչև էքիվայի կանոնագրեր: Անդրադարձել է, թե ինչ էքիվական խնդիրների ենք բախվում հայկական համացանցային լրատվամիջոցներում և արդյոք առկա մեխանիզմները բավարար են դաշտի ինքնակարգավորման համար:

*Հիմնարարեր - Էքիվա, մեխանիզմներ, խնդիրներ, լուծման ուղիներ, դիասորդ մարմին, ՏՎԻՆ, լրագրողների պաշտպանության խոսք, մամուլի օմբուդսման, լրագրողական կազմակերպություններ, էքիվայի կանոնագործություն:*

Լրագրողական էքիվան մեզանում լրջորեն սկսել են ուսումնասիրել, քննարկել դեռ 1990-ականների վերջերին: Սակայն, մինչև օրս մերժադատում գործունեություն ծավալող լրատվական գործունեություն իրականացնողների մեջ կան այնպիսիք, որոնց համար էքիվան անկարևոր մի բան է, ուստի, էքիվայի մասին պետք է գրել և խոսել, քննարկել և տարածել, ուղղորդել և ստիպել հարգել ընթերցողին:

Համացանցային լրատվամիջոցների ստեղծմամբ և տարածմամբ առաջ եկան նոր էքիվական խնդիրներ, որոնց լուծման համար առկա ինքնակարգավորման մեխանիզմները բավարար չեն: Գերմանիայի Բունդեսբազի փորձագետ Նիլս Լենպոլը կարծում է<sup>1</sup>, որ նոր լրատվամիջոցները իրենց հետ բերել են էքիվայի նոր տեսակ, որոնց համար անհրաժեշտ է ստեղծել էքիվական նոր կանոնակարգ, ինչպես ժամանակին ստեղծվեց ավանդական լրատվամիջոցների համար: Փորձագետը առաջարկում է լինել բաֆանցիկ, միաժամանակ ընդունում է, որ կա ռեյտինգի, արագության խնդիր, վերնագրերով, սոցիալական ցանցերից գրառումներով մեղիա արտադրողները ապահովում են այցելուներ, և էքիվան մղվում է երկրորդական պլան: Իսկ Բիլեֆիլդի համալսարանի իրավունքի դասախոս Սեբաստիան Մյուլերը<sup>2</sup> նշում է, որ թվային հեղափոխության դարաշրջանում փոխվում են մասնավոր և հանրային տիրույթների գաղափարը, ուստի առաջ է գալիս էքիվական պատասխանատվության խնդիր, թե ինչպես ենք աշխատում:

Հայաստանում ինքնակարգավորման բազմաթիվ մարմիններ կան՝ մամուլի խորհուրդներ, մամուլի օմբուդսման, լրագրողական կազմակերպություններն ու լրագրողական միություններ (Հայաստանի ժուռնալիստների միությունը, Երևանի մա-

մուլի ակումբը, Մամուլի ազգային ակումբը, խոսքի ազատության պաշտպանության կոմիտեն, Ինֆորմացիայի ազատության կենտրոնը, Սեղիա նախաձեռնությունների կենտրոնը (նախկին Ինտերնյուս հ/կ), Ժուռնալիստների Ասպարեզ ակումբը և այլն), խմբագրական կոլեգիա, էքիվայի կանոնագրեր և այլն<sup>3</sup>, սակայն այս ամենը ամբողջովին չեն լուծում համացանցային լրատվամիջոցներում առկա էքիվական խնդիրները:

Անդրադառնանք միայն վերջին տարիներին ստեղծված մի բանի ինքնակարգավորման մարմիններին, որոնք առնչվում են համացանցային լրատվամիջոցների հետ: Դրանք են, օրինակ՝ Դիտորդ Մարմինը և Տեղեկատվական վեճերի խորհուրդը:

Երեանի մամուլի ակումբի նախաձեռնությամբ 2007թ համատեղ մասնագիտական էքիվական նորմեր մշակվելու և դրանք առօրյա գործունեության մեջ կիրառելու զարաֆարի շուրջ միավորվեցին ԶԼՄ-ների ներկայացուցիչներ, մշակվեց Վարքականոն և դրան կից Հռչակագիր՝ ընտրությունների և հանրաքվեների լուսաբանման սկզբունքների վերաբերյալ, ընտրվեց կազմ մինչև 14 անդամ: Այդպես ստեղծվեց Դիտորդ մարմինը, որը սկզբնապես աշխատում էր ոչ ակտիվ սկզբունքով, այսինքն՝ վարույթներ չեր հարուցում, երբ լինում էր բողոք, վարույթ էր հարուցում և սկսում քննել՝ համապատասխանությունը էքիվայի վարքականության, որը ստորագրել են տվյալ լրատվամիջոցները: Այսօրվա դրույթյամբ ԶԼՄ-ների դեկավարների և լրագրողների Վարքականության միացել է 42 լրատվամիջոց, իսկ նախաձեռնությանը սատարում է լրագրողական 8 միություն: 2007 թվականից մինչև 2016թվականի մարտ ամիսը մարմինը քննել է 38 գործ, և իմանականում լրատվամիջոցների կողմից

Եթիկայի խախտում արձանագրվել է: Սակայն, խնդիրն այն է, որ ԴԱ-ն գործ ունի հրապարակված և հետևաբար պոտենցիալ վնաս հասցված նյութի հետ, հետևաբար՝ եզրակացության արդյունավետությունը այդքան էլ բարձր չէ, լավագույն դեպքում այն կարող է կանխտղ բնույթ ունենալ վարքականութիւն միացած մյուս լրատվամիջոցների համար: Կոպիտ ասած՝ սա այն դեպքն է, եթե քաղցկեղը սկսում են բուժել ի հայտ գալուց և մետաստացներ տալուց հետո, սակայն մյուս կողմից էլ՝ այս քայլը կարող է կանխարգելիչ նշանակություն ունենալ մյուսների համար:

Հայաստանում մեղիայի ինքնակարգավորման ոլորտում ակտիվ գործունեություն ծավալող մյուս կազմակերպությունը Տեղեկատվական վեճերի խորհուրդն է<sup>6</sup>, որն անկախ փորձագիտական մարմին է: Այն իմնադրվել է 2011 թվականի մայիսի 1-ին նախկին ՄԻՊ Կարեն Անդրեասյանի նախաձեռնությամբ. իմնական նպատակն է պաշտպանել խոսքի ազատությունը, տեղեկատվության մատչելիությունը, ինչպես նաև անձի արժանապատվությունը և մասնավոր կյանքի իրավունքը: 2016թ-ի նոյեմբերի դրույթյամբ ՏՎՀ-ն արդեն 59 եզրակացություն է հրապարակել, որոնք ոչ միայն առնչվում են լրատվամիջոցների առանձին հրապարակումներին, այլև առհասարակ առանձին խնդիրներին, թեմաներին, դատական ակտերին: ՏՎՀ-ն իմնականում կարծիք է հայտնում իր նախաձեռնությամբ ու այն գործերի վերաբերյալ, որոնք հայտնվել են դատարանում: Եվ այդ կարծիքը ձևավորում է օրենքների ու միջազգային իրավական նորմերի հիման վրա: Ի տարբերություն այս մարմնի՝ ԴԱ-ն իմնականում անդրադառնում է քաղաքացիների բողոքներին ԶԼՄ-ների հրապարակումների վերաբերյալ ու եզրակացություններում հենվում է ժուռնալիստական եթիկայի կանոնագրի վրա: Հանրային հնչեղություն ստացած դեպքերում կարող է ընդունել նաև բողոք այն ԶԼՄ-ի վրա, որը ինքնակարգավորման նախաձեռնությանը չի միացել ու կանոնակարգ չի ստորագրել: Ուղղակի, քանի որ այդ ԶԼՄ-ները պարտավորություն չեն վերցրել հրապարակել եզրակացությունը իրենց էջերում/երերում, այն տարածվում է ԴԱ-ին հասանելի տեղեկատվական խորովակներով: Լինում են դեպքեր, եթե խնդիրը սահմանային է (օրենքի ու բարոյականության միջև), այդ դեպքում որոշվում է՝ որն է ավելի նպատակահարմար՝ ՏՎՀ կարծիքը, թե ԴԱ եզրակացությունը, կամ մշակվում է համատեղ փաստաթուղթը: Բազմաթիվ օրինակներ կարելի եք երեւ, եթե ԴԱ-ն ու ՏՎՀ-ն միասին են եզրակացությամբ հանդես եկել: Մեկ այլ նրբություն ևս, ՏՎՀ-ն եզրակացություններ է տալիս նաև դա-

տարանում քննված գործերի վճիռների վերաբերյալ, և, եթե ԴԱ-ի վճիռներիցն խուսափելու համար լրատվամիջոցները պարզապես չեն միանում Վարքականութիւն, ապա այս դեպքում խուսափելու անհնար է, եթե հայտնվել եք դատարանում կամ աղմուկ է առաջացել ձեր հրապարակումը, ապա Զեզ ամենայն հավանականությամբ, կընի ՏՎՀ-ն:

Համացանցային լրատվամիջոցների եթիկական խնդիրները լուծման առումով արգելող նշանակություն ունի նաև Ֆեյսբուք տցիալական ցանցում դեռևս 2012թ-ին ստեղծված Հանուն բարեխիղճ լրագրության խումբը: Խմբի նպատակը լրատվական դաշտում գրագրության դեմ պայքարն է և հեղինակային խախտված իրավունքի վերականգնումը: Այս խումբն իր «Քարոյական» ազդեցությունն ունեցավ լրատվական դաշտում, առցանց մամուլի արդի խնդիրներից մեկի՝ գրագրության դեպքերը նվազեցին, սակայն դեռ այնտեղ պարբերաբար կարելի է գտնել «պոստեր»: «սա իմ նյութն է, գողացել եք, պատշաճ հղում ավելացրեք, հարգեք ձեր գործընկերների աշխատանքը» և այլն: Վիրտուալ տիրույթում մյուս «ինքնակարգավորիչ» դեր ունեցող հարթակն էլ Մելիխագրագիտություն խումբն է: Այստեղ ևս հավաքված են մեղինափորձագետներ, խմբագիրներ, ովքեր տեղադրում են լրատվամիջոցների նյութերը, մատնանշում այնտեղ առկա սխալները, օրինակ՝ եթե վերնագիրը կամ լուսանկարը նյութի հետ չեն համընկնում և այլն: Սովորաբար այս խմբերում բուռն բանավեճեր և քննարկումներ են լինում, «պոստեր»-ի տակ, լրագրողները հեշտ չեն համաձայնվում մեղինափորձագետների արած նկատառումների հետ, սակայն հետագայում ավելի գգույշ են լինում:

Եթիկական խնդիրները և լուծման ուղիները հայաստանյան համացանցային լրատվամիջոցներում

Լրագրողական եթիկայի նորմերը խախտելու առումով հատկապես խոցելի են համացանցային լրատվամիջոցները, քանի որ առաջին պլան է մղվում օպերատիվությունը, առավել շատ դիտումներ ստանալու ցանկությունը, հաճախ լուրերը հրապարակվում են առանց խմբագրական ստուգման և հաստատման, արդյունքում զոհ են գնում լրագրողական եթիկայի և ավանդական լրագրության այնպիսի սկզբունքներ, ինչպիսիք են հավաստիությունը, բափանցիկությունը:

Առցանց մամուլում եթիկական խնդիրների պատճառներից մեկն էլ այն է, որ, եթե ավանդական մեղինաները կայացած են, այնտեղ հիմնականում աշխատում են փորձ, կենսագրություն ունեցող լրագրողներ, ովքեր գիտեն կարելի և չի կարելի սահմանները, նյութ պատրաստելու համար երկար

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Ժամանակ են ծախսում, հետո այդ նյութը անցնում է խմբագրի, սրբագրիչի մաղով, ապա համացանցային լրատվամիջոցների դաշտում իսկական շփոք է: Նախ, սնկի պես ստեղծվում և տարածվում են կայքեր, որոնք ոչ հասցե, ոչ խմբագրակազմ, ոչինչ չունեն, մարդ-լրատվամիջոց են, եթե մեկը կարող է տանը նստած նյութեր գրել և հրապարակել, այս դեպքում ի՞նչ էթիկայի մասին է խոսքը:

Անանուն, անստորագիր նյութեր, չստուգված տեղեկություններ, սոցիալական ցանցերում ֆեյքերի անունից տարածված գրառումներ, ահա այս ամենին կարելի է հանդիպել մարդ-համացանցային լրատվամիջոցներում: Այս դեպքում էթիկական կարգավորման մասին խոսելը շրեդություն է, քանի որ նախնական պետք է կանոնակարգել՝ որքանով են դրանք լրատվամիջոց, ինչու պետք է կիսագրագետ մեկը 30 հազար դրամ վճարում կատարի, դոմեյն գնի ու համարվի լրատվամիջոց:

Էթիկական կանոնների խախտման դեպքը հանդիպում են անգամ կայացած առցանց լրատվամիջոցներում, որոնց մի մասը անփութության, չիմացության, շտապողականության արդյունք է: Դրանցից ամենատարածվածները առանձնացրել ենք ստորև:

Օրինակ՝ մարդու անձնական կյանք ներխուժելը, ի՞նչ պարտադիր է ամեն ինքնասպանություն գործած անձի ընտանիք, անկողին մտնելը, նրա կյանքի բոլոր դրվագները մանրամասն ներկայացնել, ի՞նչ է դա տալիս ընթերցողին և ի՞նչ վճառ է հասցնում վշտի մեջ գտնվող նրա հարազատներին: Հասարակ քաղաքացու անձնական կյանք մտնելիս պետք է զգույշ լինել, առաջնորդվել «մի վճարի» սկզբունքով, նույնը չենք կարող ասել պաշտոնյամերի մասով: Պաշտոնյամերի անձնական կյանք կարելի է մտնել, կարելի է սոցիալական ցանցում տեղադրված նրա լրատանկարները, գրառումները հրապարակել, տեսնել նրան որևէ հանրային վայրում որևէ մեկի հետ և գրել այդ մասին, քանի որ լինելով հանրային դեմք՝ նրանք չեն կարող ակնկալել անձնական կյանքի գաղտնիության այնպիսի աստիճան, ինչպիսին շարքային քաղաքացիները: Ինական պաշտոնյաների անձնական կյանք ներխուժելիս պետք է գերծ մնալ անազնիվ մեթոդների կիրառումից, եթե տեղեկատվությունը ստանալու համար հանրային շահը ավելի գերակա չէ:

Էթիկական մյուս խնդիրը, որը շատ տարածված է համացանցային լրատվամիջոցներում, վերաբերում է լրատանկարների հրապարակմանը, երբեմն կարելի է հանդիպել արյունաշաղախ դիակի լրատանկար, տեսանյութ՝ առանց հատուկ նախագ-

գուշացնող մակնշման: Իսկ լոգոն կտրել և տեսանյութը ու լրատանկարը սեփականը համարելով օգտագործելը պարզապես շարքային գրագողություն է:

Համացանցային լրատվամիջոցներում ամենից շատ հանդիպող խնդիրներից են նաև անանուն, կասկածելի աղբյուրների հղմանը գրված ոչ հավաստի լուրերը (ընդիուպ մահազդեր), որոնք հրապարակվում են առանց այլ աղբյուրից ճշտելու, պաշտոնական խողովակներից պարզաբանելու:

Նոր և այլն տրանքարային մեղիայի բուռն զարգացման պայմաններում առավել խոցելի դարձավ բանակը, որը երևաց ապրիլյան պատերամիջ հետո: Ինակե, այժմ զինված ուժերում առկա խնդիրները դարձել են ավելի բաց քննարկումների, քննադատության համար, սակայն, հաճախ օպերատիվության պատճառով կամ ավելի շատ ընթերցող ունենալու նպատակով՝ կայքերը հրապարակվում են կասկածելի, ոչ ճիշտ, մի քանի տարվա վաղեմություն ունեցող տեղեկություններ՝ քննարկումների լայն դաշտ բացելով հակառակորդի համար: Բիլեֆիլդի համալսարանի իրավունքի դասախոս Սեբաստիան Մյուլերը նշում է<sup>7</sup>, որ՝ «բանակը մեծ քայլացիկության կարիք ունի, հանրությունը իրավունք ունի իմանալ՝ արդյոք բանակային համակարգը լուծում է իր առջև դրված խնդիրները, քանի որ ամենաբանկը մարդկային կյանքն է: Կա նաև ինքնակարգավորում, բացառություն են կազմում առանձին բանակայիններն ու նրանց ընտանիքները, սակայն բոլոր իրավունքները պետք է կիրառելի լինեն ինչպես բանակում, այնպես էլ այլ ասպարեզներում»:

Համացանցային լրատվամիջոցների ոչ էթիկական գործունեության թիրախում են հայտնվում նաև երեխաները, նրանց իրավունքները և ուսնահարվում են, օրինակ երբ առանց ծնողի համաձայնության երեխաներից կորզում են հարցագրույցներ և հրապարակում:

Որանք ընդամենը մի քանի օրինակ են այն բազում խախտումների, որ ամեն օր կարելի է հանդիպել համացանցային լրատվամիջոցներում, լրագրողների ամենօրյա գործունեության ընթացքում: Կարծում ենք՝ հայաստանյան պայմաններում էթիկայի սկզբունքների պահպանման համար կազմակերպությունների, առանձին մարմինների գործունեությունը այդքան արդյունավետ չէ: Չատ ավելի ճիշտ կլինի խնդիրը կանխել և լուծել խմբագրության ներսում: Դրա համար նախ անհրաժեշտ է, որպեսզի դեռևս ուսանողական նստարանից լրագրողները սովորեն և սերտեն լրագրողական էթիկան, իսկ արդեն աշխատանքի տեղափոխելիս նրան փոխանցեն տվյալ լրատվամիջոցի էթիկայի

կանոնագիրը, զգուշացնեն՝ ինչն է կարելի, ինչը՝ ոչ։ Օրինակ՝ ամեն աշխատանքի ընդունվող սկսնակ լրագրողի պետք է ասել, որ հրապարակում պատրաստելիս լսել բոլոր կողմերի կարծիքը, չստուգած լուրեր չգրել, տեղեկությունը ճշտել մի քանի աղբյուրից, մարդկանց անուն, ազգանուն, պաշտոն, կոչում գրել ճիշտ և այլն։ Եթիկայի կանոնագրին ծանրացնելուց հետո հաջորդ քայլը պետք է լինի հետևելը, թե ինչպես է լրագրողը պահպանում այն։ Օրինակ՝ եթե լրագրողը խախտել է եթիկայի կանոնագրի որևէ կետ, ապա անպայման պետք է այդ ամենը քննարկել, վերլուծել, հասկանալ պատճառը, շատ կարևոր է պարզել՝ արդյոք լրագրողը անգիտակցարար է խախտել այդ դրույթը, թե գիտակցարար, ինչ շահ է ունեցել։

Միայն սեփական խմբագրություններում լրագրողական եթիկան սերմանելով և պահպանելով՝ կարելի է հասնել լիակատար ինքնակարգավորման։ Դաշտում գործող կազմակերպությունների կողմից ընդհանուր ինքնակարգավորման հասնելը այնքան իրական չենք համարում, քանի որ լրագրողները և լրատվամիջոցները չեն սիրում, երբ իրենց կողքից կամ դրսից որևէ մեկը բան է սովորեցնում, «խելք, խրատ տալիս, ասվածը սովորաբար ընդունվում է թշնամարար և դրա տակ հատուկ ենթատեքստեր են փնտրում։ Ուստի՝ լրագրողի կողմից եթիկան պահպանելու հարցը ավելի լավ է լու-

ծել խմբագրությունում, քան հրապարակախն դաշտում։ Կարծում ենք՝ լրատվամիջոցները վաղ թե ուշ կիասնեն որոշակի մակարդակի, այլապես այսպիսի խանուաշփոր վիճակը շտկելու համար կարող են միջամտել իշխանությունները, իսկ դա կլինի վիրահատականե միջամտություն՝ ցավոտ և հնարավոր է՝ ոչ մեղիայի շահերից բխող։

Այսպիսով, նոր տեղեկատվական, հաղորդակցական տեխնոլոգիաները փոխում են զանգվածային լրատվամիջոցների բովանդակությունը, լրագրողի մասնագիտության դրսնորումները, յուրաքանչյուր տեղեկատվություն փոխանցող դառնում է մեղիա կրիչ, և հարց է առաջանում ո՞վ է լրագրողը։ Եթե շարքային նյուզմեյքերի դեպքում չստուգած, ոչ հավատի, սկանդալային և զրպարտող տեղեկատվություն տարածելը կարող է դիտվել անպատճիսանատվություն՝ պայմանավորված ինչոր շահերով, ապա լրագրողի դեպքում դա պրոֆեսիոնալիզմի բացակայությունն է։ Եթիկայի կամ ինքնակարգավորման անհրաժեշտությունն էլ պայմանավորված է ոչ միայն տեղեկատվության փոխանակման կառավարման, կյանքը տեղեկատվական աշխարհում կանոնակարգելու համար, այլև անհրաժեշտ է շարքային ընթերցողին՝ տարրերելու լրագրողին պարզապես նյուզմեյքերից։

<sup>1</sup> Նոր և այլընտրանքային մեղիա. Եթիկական և իրավական խնդիրներ (գլխ. Խմբ. Ն. Մարտիրոսյան), Երևան, 2012թ., էջեր 59-62։

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում։

<sup>3</sup> Վարդուիի Պետրոսյան, Ժուռնալիստական եթիկա, հիմնախնդիրները և զարգացման միտումները արդի հայ մամուլում, 2012թ., էջ 20։

<sup>4</sup> <http://ypc.am/self-regulation/?lang=hy#self-form>

<sup>5</sup> [http://ypc.am/wp-content/uploads/2014/06/Code-of-Ethics\\_arm.pdf](http://ypc.am/wp-content/uploads/2014/06/Code-of-Ethics_arm.pdf)

<sup>6</sup> <http://www.idcarmenia.am/hy>

<sup>7</sup> Նոր և այլընտրանքային մեղիա. Եթիկական և իրավական խնդիրներ (խմբ. Ն. Մարտիրոսյան), Երևան 2012թ., էջ 62։

#### Գրականություն

1. Վլոդ-Ժան Բերտրան, Մամուլի ազատության և պաշտպանության երաշխիքներ, Լրատվական եթիկայի և պատճիսանատվության համակարգեր, Երևան, 2000թ.։
2. <http://www.idcarmenia.am/hy>
3. <http://ypc.am/oldypc/expert/ln/am>

Инга Мартинян  
аспирант кафедры теории и истории прессы  
факультета журналистики ЕГУ

**РЕЗЮМЕ*****Проблема саморегулирования в армянских интернет-СМИ***

В статье автор затронула вопросы журналистской этики. В первую очередь описала, что из себя представляет этика, к чему она восходит и почему нужна в журналистской среде.

Затем представила действующие в Армении механизмы саморегулирования, от организаций и групп до этических кодексов.

Также коснулась этических проблем, с которыми мы сталкиваемся в армянских интернет-СМИ, проанализировав, достаточны ли действующие механизмы для саморегулирования поля.

**Ключевые слова:** этика, механизмы, проблемы, пути решения, наблюдательный орган, совет по информационным спорам, группа защиты журналистов, пресс-омбудсмен, журналистские организации, этические кодексы.

Inga Martinyan  
YSU Faculty of Journalism, Chair of Media  
Theory and History Post-graduate student

**SUMMARY*****Self regulation problems in Armenian media***

In the article titled “Self regulation problems in Armenian media” I’ve referred to the journalistic ethics. First of all I have introduced where the ethics come from and why it is necessary in media sphere. Then I have presented what kind of mechanisms of self regulations are applied in Armenia beginning form organizations, groups up to ethic regulations. After then I have referred to the ethic problems that Armenian media face and if the mechanisms are sufficient for the sphere self regulations.

**Keywords:** Ethics, mechanisms, problems and solutions, the supervisory body, IDC, journalists protection group, the Press Ombudsman, journalists organizations, ethics regulate.